

Սագարետի, Մոխունցետի Մ., Բաբուշ-
օղի, Դոլօգանի, Զինկաձէ, Կապնիս-Թավա
եւ Կիրէ առուակները համանուն գեղերից,
որոնք ոռոգում են այս գեղերը իրանց պա-
րագաներով: ձախից ընդունում է Խոխնա,
Բգուրգուօ, Ուշխոտ, Մահլազանի եւ Մե-
լիսի առուները եւ Խերավիսի մօտ խոռոչում
է ձորոխին, որ Բաթումից 3 կիլոմետր հե-
ռաւորութեամբ թափւում է Սեւ Ծովը կաղ-
մէլով մի մեծ գելտա 8 կիլոմետր լայնու-
թեամբ եւ 11 կիլոմետր երկարութեամբ:

ժ2.

Կորուէտի եւ Կինդերի:

Բաթում քաղաքից եւ նաւահանգստից
դէպի հիւսիս մինչեւ Կորուէտի կայարանը,
մինչեւ Աշխուա առուակը Աջարայի մասն է
կազմում: ձորոխի գելտան են թափւում
Կապնիս-Թավի, Կապանդերի, Էրգէ, Զաչօ,
Խելվաչաւուրի, Շիրաքուձէ, Կախաբերի
գաչտում ձմեռանոցներ. Թովալ-օղի,
Մէիլէ, Ստեփանովկա եւ Լիմանի քաղ: Բա-
թումի հարաւային Ախաշէն լեռներից իջ-
նում է համանուն առուն, որ ոռոգում է
համանուն գեղը, Սուրգու, Իջադիէ, Մա-
մուդիէ եւ Ֆէյիգէ արուարձանները եւ Բա-
թում քաղաքի մօտ թափւում է ծովը:

Կորունիս-Թավի լ-ից իջնում է համա-
նուն առուակը, Օքաքաքում, Ագարա,
Կապրիշաւուն եւ Բարձէլսանա գեղերը ոռո-
գելով՝ թափւում է ծովը: Այս Կաքադերէ,
Մանել-օղի, Բագրատ-օղի, Մախիննաւուրի
առուները համանուն գեղերը ոռոգելով
թափւում են ծովը: Չակվիսաքա լեռներից
համանուն եւ Բեգլեմար, Մորվել լեռներից
Չակվիսադալի, Չակվիսաքալի լեռներից
համանուն առուն, Դադուա լ-ից. Բղենիս
առուն, իջնում են միանում, կազմում Չակ-
վիս վտակը, ոռոգում են գաչտում Խալա,
Գորգաձէ, Դիդշամէ, Խիվաշի եւ Չակվա
կայարանը, Ատկուա, Յեխիսձիլէ եւ Օթ-
րիս-օղլի գեղերը:

Դագուա լեռների հիւսիսային փեշերից
իջնում է համանուն առուակը ոռոգում է

համանուն եւ Բորոգալի գեղերի հանդերը
եւ Պանտուրանի մօտ թափւում է ծովը:
Կինտրիլ գետը սկսւում է Խինա լեռներից,
իջնում է Յերմուխիս-Գիլէ, Մակարիս-
Գիլէ, Սաղգետիս-Գիլէ, Զիմոխին, Մե-
լիսիձիլէ, Զերաքուսի, Ուրտխնալի, Խե-
կեմալ, Չիվարավի, Յիսեմլաքանի, Միսեմ-
լուանի, Կոքալաւուրի, Տկեմակարավի,
Վարջանաւուրի, Կեցիետի, Սոդումուրի, Զա-
խատի, Կոխի, Օսետուրի, Խուցուրանի, Զե-
նիտի, Կորուէտի, Կանդետի, Սամեքա
գեղերը եւ Կաբուլետի կայարանը, 32 կիլո-
մետր ընթացքից յետոյ:

Չուրուք-Սուն սկսւում է Աշկվիսալի
բարձունքից, սահման է կազմում Կենդրիշի
գաւառակի եւ Գուրիայի, ոռոգում է Զե-
գեդինա, Սկուրա, Յիւրապանա, Ալամբարի
գեղերը, անցնում է Ալամբարի աւերակ տա-
ճարի մօտով եւ թափւում ծովը Մեկալով-
գայի մօտ:

Լեմիսակա:

ԱՏՐՊԵՏ

(Վերջ:)



ՍԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԴԱՂԱՅԵՆՆ Յ. — Ռուս-Հայերէն լիակատար Բառա-
րան 10 պրակներից. Երկրորդ հրատարակու-
թիւն. Պրակ Ա. Թիֆլիս 1927:

Մեր ուսագէտ հասարակութեան ծա-
նօթ են արդէն Դաղբաշեանի հրատարակած
Հայերէն-Ռուսերէն (1911) եւ Ռուսերէն-
Հայերէն (1906) բառարանները: Այս վերջ-
նոյս երկրորդ հրատարակութեան ձեռնար-
կած է վերստին անխոնջ բառադրագէտը,
մասնաւորապէս ճոխացնելով աշխատու-
թիւնը «յետ պատերազմեան» գիտական բա-
ռերով: Պատերազմը ինչպէս կերպարանա-
փոխեց ազգագրական սահմանները, նոյն-
պէս այլաշրջեց լեզուներու արտաքին տա-
րազը մերթ «ի լաւն»՝ յառաջադիմութիւն
եւ մերթ «ի յոռին»՝ յետադիմութիւն եւ
խառնակութիւն:

Այսպէս «ի լաւն» փոխուեցաւ ուսու-
րէն լեզուին գրչութիւնը, որուն այբենա-

թենիների պարտեզները, խաղողի այգեստանները, պտղա-
թենիների պարտեզները, ընկուզնոցները, կաղնիոց-
տու ծառերի պարտեզները, մասնաւորապէս որ գրանք ընդ-
նեքը. նշոցները ստիպում են մասնաւորապէս, որ գրանք ընդ-
օրինակուած են Յունաստանի եւ Իտալիայի latifunda-
նեքից:

րանը նուազեցաւ իջաւ 31 տառերու, ստացաւ ուղղագրական չափ մը դիւրութիւններ որով պայծառացաւ, դարգացաւ եւ մերձեցաւ ժողովրդեան ըմբռնման: Մինչդեռ Հայերէնը, Արեղեան անմիտ նորագրութեամբ երկու եւ աւելի եւս դարեր յետագիմեց. բայց այդ դարերն ունէին դարձեալ առաւելութիւն... լեզուն նոյն դարերուն Հայ ժողովուրդէն կը հասկցուէր... մինչ քանի որ դարու խորհրդային Հայերէնը ըմբռնելու համար թարգմանութեան կը կարօտինք: «Մ. Արեղեանի արած այրբեանական փոփոխութիւնները ոռւս այրբեանում արած փոփոխութիւններէ թոյլ եւ անյաջող արձագանգն են» կը գրէ Դադբաշեան եւ կը շարունակէ՝ «Այս ուղղագրութիւնը մի անախորժ անակնկալ էր համարեա բոլոր Հայ մտաւորականների համար» (Նախաբան, էջ VI [2]): Ո՛չ թէ միայն Հայ մտաւորականներու, այլ բնդհանուր հայութեան համար, որ զգուանքով արտայայտուեցաւ նորելուկ, անխորհուրդ գրչութեան մասին:

Այս «յետպատերազմեան» խորհրդային փոփոխութիւններն են որ բառագրքիս հեղինակը, այս երկրորդ տպագրութեան պահուն, անհամար դժուարութիւններու են մատնած: — Սա կէտը սակայն միւլթարական է որ Դադբաշեան յաջողած է բառարանը հանրութեան ներկայացնել ոչ թէ Մ. Արեղեանի չարակերտած գրչութեամբ, այլ աւելի հանդուրժելի, աւելի հինին մօտեցող ուղղագրութեամբ:

Դադբաշեան իր նախաբանին մէջ ամփոփած է գործադրած ծրագիրը մանրամասնօրէն, տալով տեղեկութիւններ մասնաւորապէս թէ ի՞նչ նորութիւններ մուծած է այս նոր տպագրութեան մէջ: Մենք գոհունակութեամբ սրտի կըցանք ստուգել եղած նորութիւնները. բառամթերքը ճոխացուած է, օտարազգի բառեր եւ ոճեր հիւրընկալուած են, բաղմաթիւ ժողովրդական բառեր ու դարձուածքներ իրենց որոշ տեղը գրաւած են եւ վերջապէս՝ այն բառերուն «որոնց համապատասխան հայերէն բառերը բացակայում էին» այս տպագրութեան ժամանակ ջանք թափուած է «Հայ գրականութիւնից» ժողովել եւ գնել պէտք եղած տեղը:

Շատ իրաւացի է Դադբաշեանի տըրտունը թէ՛ «տեղից վեր կենողը բառարան է կազմում: Հայ գրավաճառութեան չուկան ողողել են բաղմաթիւ ոռւս-Հայ եւ Հայ-ոռւս «մասնագիտական» բառարանները»: — Ցաւալի երեւոյթ, բայց մենք ապահով ենք որ Դադբաշեանի լիակատար բառարանը իր անմրցելի առաւելութիւններով պիտի յաջողի կարճ ժամանակի մէջ «գրավաճառական չուկան գրաւել» — եւ այն ատեն, կարծեմ տեղն է ըսել Լ. Խանադեանի հետ թէ՛ «Այս բառարանից յետոյ այլ եւս ոչ ոք ոռւս-Հայ (լիակատար) բառարան չի հրատարակի»:

Հ. Կ. ՏԵՐՄՈՅԵԱՆ

DIRR ADOLF: Einführung in das Studium der kaukasischen Sprachen. Mit einer Sprachkarte. — Leipzig, Asia Major, 1928. 8°, X + 380. Geb. RM. 38.—.

Կովկասեան լեռնաշխարհը հակառակ իր բնակչութեան փոքրաթիւ քանակին տակաւին այսօր կը ներկայացնէ դարմանալի պատկեր մը՝ բաղմաշուրթն եւ ալլազան ժողովուրդներու, իրենց յատուկ տոհմային բաղմաթիւ բարբառներով, որուն նմանը աշխարհիս գրեթէ եւ ոչ մէկ մասին մէջ կարելի է գտնել: Բարբառներն լեզուներու խառնակութիւն մըն է, որ կաւկասեան ժողովուրդներու քով կը տիրէ: Այն բաղմաթիւ լեզուները, որոնք Կովկասի հիւսիսարեւմտեան մասին մէջ բնակող համացեղ ժողովուրդէ մը կը խօսուին, կը կոչուին Կովկասեան լեզուներ, որոնց ուսումնասիրութեան նուիրուած է այս գեղեցիկ եւ հմտալից գործը, քսանամեայ խուզարկութեան մը արդիւնքը, գրուած սակաւաթիւ վրագէտներու ականաւորէն՝ Ադոլֆ Դիրի:

Գրութեան նպատակն ինչպէս Հեղինակն իր Յառաջաբանին սկիզբը կը յայտնէ, է մեկնել հիմնական իրողութիւններն ու երեւոյթներն այն լեզուին, որ անձուկ մտքով Կովկասեան անունը կը կրէ, եւ երկրորդ առաջնորդութեան եւ ուղեցոյցի պաշտօն ստանձնել այդ լեզուաճիւղին ու-